դիմօք արձակել և թոյլ տալ աղաչէր, բաւական է բաւական է ասելով. վ. ասէ, Այն քիչ է տահայ, այնպէս անենք օր ուրիշին խրատ լինի։ Եւ այսու ոչ շատացեալ անգութքն ի բանտ չաւուշին ստիպեն գնալ ոտիւք, որ ոչ կարէ քայլել. ստիպեն դամշիով հարմամբ զբոլոր մարմին թէ կանգէ և քայլէ։ Իսկ նա աղաղակէ ոչ կարեմ, և հարմամբ դամշիին զմի ակն ևս խաւարեցուցեալ և ուռուցք մեծագոյն ի վերայ աչացն. և մինչ չկարացին ոտիւք տանիլ, վ.ն և այլք անգգամք ի վերայ երկրի քարշելով տարին ի բանտ չաւուշին, պնդել պնդագոյն ի կոճեղս. խաչելութիւնն ի ծոցէ քահանային անկեալ յերկիր. չար վ.ն կոխոտեալ զնա թէ այս ֆրէնկի խաչ է։ Եւ յետոյ զաղտ ոմանք ուղղափառք զդրամ հաւաքեալ 25 ղրուշի չափ, տուեալ են զի թուլացուսցէ։ Ի մօտակայ աւուրս եկն ոմն իբրու թէ փախեալ ի գաղատիոյ, որ է եղբօր որդի Սէրգիս աղային, որ նա պատմեալ է զայս ամենայն. և ասացեալ թէ ելած օրս լսեցի, թէ քահանային յոտից մինչև ի մէջքն ուռեցվօրեր է, և աչքն խաւարեալ, դժուար թէ ողջ մնացՙ[1]։...

Գերյարգութեան ձերում
Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ.

Յամի Տեառն 1748-ին
յունվարի 2-ին
[Կ. Պոլիս]

ՃԽԱ.

Հ. Մ. Պոտուրեան ինը նամակներ միայն գտած էր Ս. Ղազարու Դիւանատան մէջ Սարաֆեան Սարգիս Արքեպս.է առ Մխիթար, ի շահ Հ. Գալեմքեարի ուսումնասիրութեան, ինչպէս առաջ ըսինք։ Մենք հոս կը ներկայացնենք դեռ երկու նամակներ։

Թէ Սարգիս ինչ պայմաններու, մանաւանդ թէ ինչ վարպետ ձեռքու տակ գրած է զանոնք՝ Մխիթարայ կենսագրութեան մէջ պիտի գտնենք։

Առաջին նամակին մէջ՝ ան Մխիթարայ կը դիմէ Սաղմոսին տպագրութեան հրաման խնդրելու. միևնոյն ատեն կ՚իմանանք ձեռք զարկած միւս աշխատութիւնները։ Երկրորդ նամակին մէջ Սարաֆեան կը գրաղի Մխիթարայ կողմէ ստացած առաջին պատասխանով[2]։

Ցեառն Ցեառն Մխիթարայ գերյարգելի Հօրն մերոյ
Ողջունիւ համեղերձ յայտարարութիւն լիցի

Ձի կամիմ թէ զսաղմոս իմն տպագրիցեմ զոնեայ, առ ի նուազել զթուղթն իմ, որպէս գրեցաւ յառաջն։ Որոյ պատճառն է այս, զի թէպէտ սկսայ զներածումն առ ջերմեռանդութիւն սրբոյն Ֆրանչիսկոսի սալեզացւոյ, բայց կարի ոկարացոյց զիս վերստին, նորապէս գրումն երկուց գրեանց ի միասին։ Ուստի կամիմ զի ժամանակ ինչ ի բաց

1. — Ուրիշ նամակի մը մէջ կը գտնենք հետևեալ պատառիկը. «Ձնոյն քահանայն, որոյ զ500 բիր հարեալ «ռուացն, յետ որոյ ի բանտ ի կոճեղս պնդեալ, և տակաւին կենդանի գոլով ի բերդի են եդեալ» (Հ. Միք. Վ. առ Մխ. 1748, յունվ. 28)

2. — Սարաֆեան «1748 տարւոյն, Վենետիկցի տպագրողի մը միջոցով, ձեռք բերաւ ճարտարութեամբ Արքահօր նոր շինել տուած տառերուն մայրերը, և բաւական քանակութեամբ գրեր ձուլել տալով, գաղտուկ տպագրել տուաւ իրեն թարգմանած մէկ գիրքը։ Նոյն տարին Մխիթար փոքրադիր Սաղմոս տպել տուած էր պատկերներով և զարդագիրներով. Սարգիս եպիսկոպոսն ալ, ճիշդ նման պատկերներ և ծաղկագրեր շինել տալով, նոյն ձևով ուզեց Սաղմոսը տպել տալ. Ազգայիններէն ոմանք լսելով մեղադրեցին զինքը. նա ալ Աբբահօր դիմեց իբր հրաման խնդրելու...»։ Առ որ Մխիթար պատասխանած է. «Եթէ կ՚ուզես տպել տալ, դու գիտես, բայց այդ բանը ոչ միայն մեզի կը վնասէ, որ այնչափ փոյթս չէ, այլ նաև քեզի, որով պիտի մեղադրուիս շատերէն և անունդ պիտի կոտրի։ Եպիսկոպոսը թոյլտուութիւն համարելով զայս, տպագրեց զայն յար և նման Մխիթարայ հրատարակածին։ Միաբանք իմանալով եղածը՝ այնչափ վշտացան, որ խնդրեցին Աբբահօրէն տէրութեան ձեռքով դադրեցնել զայն. Մխիթար, փոխանակ անոնց խօսքերէն շարժելու, յանդիմանեց զանոնք՝ հեզութեան և անյիշաչարութեան մէջ պակսելնուն համար», խօսելով անոնց հետանալի յորդոր մը, ուր Մխիթարայ հոգւոյն ազնուութիւնը արևու պէս կը փայլի (Թորոսեան, Վարք Մխիթարայ, էջ 399)։